

ԱՊԱԳԱՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 2400 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2400 • 4 SEPTEMBRE 2023 • MONDAY, 4 SEPTEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

«ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 48-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ՝ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՅՂ ԱՌԻԹՈՎ, ՏԱՐԵԿԱՆ ԴՐԱՄԱՅԱՄԱՔԻՆ



«ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթը որպես Գանատահայ առաջին և եռալեզու շաբաթաթերթ այս տարի կը լրացնէ իր հրատարակութեան 48-րդ տարեդարձը:

Ան իր 1975-ին լոյս տեսած առաջին թիւէն սկսեալ անփոխարինելի շաղկապը հանդիսացաւ մոնթրէալահայութեան, գանատահայութեան, հայրենիքի եւ ամբողջ հայ իրականութեան բոլոր մասնիկներուն միջեւ:

Հակառակ տարբեր ժամանակներու մէջ դիմագրաւած տնտեսական բոլոր դժուարութիւններուն «ԱՊԱԳԱՅ»-ն անխափան կը շարունակէ իր կանոնաւոր հրատարակութիւնը եւ նոյնիսկ, զայն առցանց հասանելի դարձուցած ենք ամբողջ գանատահայութեան եւ աշխարհատարած մեր ընթերցողներուն:

Այսպիսի առաքելութիւն մը սակայն, թանկագին հայրենակիցներ, անհրաժեշտօրէն պէտք ունի մեր ընթերցողներու շարունակական նիւթական ուղղակի օժանդակութեան: Մոնթրէալի Թէքէեան Մշակութային Միութիւնը ըլլալով հրատարակիչը «ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթին, նոյնպէս վեց տասնամեակներէ ի վեր կը ծաղկեցնէ մոնթրէալահայ գաղութը իր մշակութային, ընկերային եւ ազգային դաստիարակչութեան ճոխ ծրագիրներով, որոնք եւս պէտք ունին ձեր ազնիւ նիւթական նեցուկին:

Ահա ուրեմն սիրելի ընթերցողներ այս բոլորին համար ներկայ գրութեամբ կը սկսինք մեր այս տարուայ դրամահաւաքը եւ կոչ կ'ընենք ձեր, որպէսզի գիտակից առատաձեռնութեամբ ձեր մասնակցութիւնը բերէք անոր, ինչպէս ազնուօրէն կատարած էք անցնող տարիներուն ընթացքին: Բնականաբար կրնաք նաեւ ձեր փոխգիրը սովորական ձեռով ուղարկել Թէքէեան Մշակութային Միութեան հետեւեալ հասցէին՝

825 rue Manoogian, St-Laurent, QC, H4N 1Z5.
Ձեր նուիրատուութիւնը ինթերնէթի միջոցաւ կատարելու համար հաճեցէք հեռաձայնել 514-747-6680 մեր գրասենեակի թիւին:

Բոլոր նուիրատուութեանց դիմաց բնականաբար պիտի ստանաք տուրքէ զերծ մնալու համապատասխան ստացագիր:

Միանական ջանքերով է որ պիտի կարենանք շարունակական պահել այս ազգանուէր գործունէութիւնը:

Շնորհակալութիւն Ձեր բոլորին
Թէքէեան Մշակութային Միութիւն
Ի Դիմաց Հանգանակիչ Յանձնախումբ

ԱԶԳԱՅԻՆ ԵԶԱԿԻ ԲԱՐԵՐԱՐ ՆԱԶԱՐ ՆԱԶԱՐԵԱՆ ՈՉ ԵՄՍ Է

Խոր ցաւով տեղեկացանք ազգային եզակի բարերար Հ.Բ.Ը.Մ.եան երկար տարիներու գերագոյն ղեկավարութեան դիրքերու վրայ գտնուած Նազար Նազարեանի մահուան տխուր լուրը, որ տեղի ունեցած է երկուշաբթի 28 Օգոստոս 2023-ին 98 տարեկան հասակին:

Հանգուցեալ Նազար Նազարեանին կեանքի հաւատամքը եղած է՝ «անմնացորդ նըւիրուիլ սեփական ազգին եւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին եւ վայելել անոնց ծառայելու բերկրանքը»:

Իր կեանքին ընթացքին ան հովանաւորեց ազգաշէն գործունէութիւններ կրթութեան, ազգաշինութեան եւ առաջին հերթին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ գործունէութեանց ամենակարեւոր ոլորտներուն մէջ:

Իր լուսահոգի կնոջ Արտեմիսին հետ միասին անոնք իրենց զաւակներուն, Սեդային եւ Լեւոնին եւ անոր կնոջ Գլուխային, ինչպէս նաեւ հինգ թոռներուն մէջ սերմանած են նոյն առաքիլի յատկանիշները:

Նազար ծնած է Հալէպի Լեւոն եւ Սաթենիկ Նազարեաններու ընտանիքին մէջ, սակայն մեծցած է Լիբանանի մէջ՝ իր սիրելի եղբայրներուն՝ Կարպիսին, Նուպարին, եւ քրոջ Մարիին հետ: Անոնք բոլորն ալ Լիբանանի գաղութին ականաւոր եւ գործունէ այնպէս անդամները հանդիսացած են:

Նազար Նազարեան ասարած է Պէյրութի ամերիկեան համալսարանը որպէս դեղագործ: Սակայն ընտանեկան ասպարէզը ընդլայնելու համար ան 1950-ական տարիներուն արտագաղթած է Ա.Մ.Ն. ուր հանդիպած է իր կեանքի ընկերոջ Ուոլթըրթանցի Արտեմիս Թոփչեանին:

Ամերիկեան աշխարհին մէջ տնտեսապէս բացառիկ յաջողութեան հասած ըլլալով, Նազարեան ամուլը փափաքեցաւ կիսել իրեն յաջողութեան պտուղը հայկական նպատակասլաց կարեւոր նախաձեռնութեանց հետ: Անոնք առատաձեռնօրէն նպաստեցին հայ գաղութի զարգացման ոչ միայն իրենց բնակավայր Նիւ-Եորքի շրջանին մէջ, այլ նաեւ աշխարհատարած բազմաթիւ գաղութներուն մէջ եւ ի վերջոյ նաեւ մանաւանդ Հայաստանի եւ Արցախի մայր երկրին մէջ:

Բնական էր որ Նազար հաւատալով Հ.Բ.Ը.Մ.-ի ազգանուէր գործունէութեան, շուտով մաս կազմէր սփիւռքի այդ մեծ կազմակերպութեան գերագոյն ղեկավար մարմիններուն:

1978-էն մինչեւ 2007 ան եղած է Հ.Բ.Ը.Մ.-եան Կեդրոնական Կարչական Ժողովի անդամ, գանձապահի եւ փոխ նախագահի պաշտօններով: Այնուհետեւ եղած է Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ, ապա՝ Պատուոյ Հոգաբարձու: Ան ամենամտերիմ խորհրդակիցներէն մէկն էր հանգուցեալ ցեղանս Նախագահ Ալեք Մանուկեանին:

Նազարեան ամուլը առաւելաբար Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակներուն մէջ մասնաւորաբար կրթական բնագաւառին մէջ աշխարհի տարբեր գաղութներուն մէջ օժանդակած են դպրոցներու, հիմնած են կրթաթօշակներ եւ համայնքային կեդրոններ: Ասոնք շարքին կարելի է յիշել Պէյրութի «Լեւոն եւ Սաթենիկ Նազարեան» նախակրթարանը, Նիւձըրքի «Լեւոն Նազարեան» դահլիճը, Հ.Բ.Ը.Մ.-ի «Մանուկեան Դեմիրճեան» վարժարանի «Արտեմիս Նազարեան նախակրթարանը Պոնտուս Այրէսի» «Նազարեան սրահ»ը եւ այլ բազմաթիւ նման բարերարութիւններ:

Շար. - էջ 9

ԽՈՐԱԶԳԱՅ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգային մեծ բարերար Նազար Նազարեանի մահուան տխուր առիթով՝ Մոնթրէալի Թէքէեան Մշակութային Միութիւնը, Մոնթրէալի Ռ.Ա.Կ. Էօժէն Բաբազեան ակումբի վարչութիւնը, եւ «ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ անձնակազմը իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալին զաւակներուն, թոռներուն ինչպէս նաեւ իրենց սզակիր բոլոր պարագաներուն:

Երախտագիտութեամբ կը յիշենք հանգուցեալին գիտակից ազգային անհամար բարերարութիւնները եւ յատկապէս իր երկար տարիներու առատաձեռն քաջալերութիւնը մեր կազմակերպութիւններուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:
Աստուած լուսաւորէ անոր ազնիւ հոգին:

Թէքէեան Մշակութային Միութիւն Մոնթրէալ
Ռ.Ա.Կ. Էօժէն Բաբազեան Ակումբ
«ԱՊԱԳԱՅ» շաբաթաթերթ

ԳԱՂԱՓԱՐԱԶՈՒՐԿ ԵՒ ՅԱՐԱՓՈՓՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱԿՈՒ ԱՆԵՏԻՔՆԵՆ

Դժուար պիտի ըլլար ըսել, թէ քանի՞ պիտի հասներ հայաստանեան կուսակցութիւններուն թիւը, եթէ նախորդ տարի Ազգային ժողովը (խորհրդարան) բարեփոխած ու որոշ չափով խստացուցած ջրլար կուսակցութիւններու մասին գործող օրէնքը: Հաւանաբար 100-ի սահմանը պիտի անցներ, այժմեան 70-ի փոխարէն:

Խօսքը կը վերաբերի քաղաքական այն կազմակերպութիւններուն, որոնք պետական գրանցում (registration) ստացած են, այսինքն ճանչցուած են որպէս իրաւաբանական անձ, ինքնութիւն, ունին պաշտօնական հասցէ, հեռախօս, կայքէջ, կանոնադրութիւն (մեզի ծանօթ ծրագիր կանոնագիրը), համագումարով ընտրուած ղեկավար մարմին եւ ղեկավար, որուն հոս անպայման «նախագահ» անունը կը սիրեն տալ, բացի ամանակական երեք կուսակցութիւններէն:

Կուսակցութիւն հիմնելու եւ գրանցել տալու պայմաններէն մէկն ալ, նոյն օրէնքի պահանջով, անդամակցութիւնն է, անդամներուն թիւը, որ հիմնադրութեան ժամանակ սկսելով 100-էն՝ երկու տարուան ընթացքին նուազագոյնը 2000 պետք է ըլլայ: Պարագայ մը, ընդունինք, գոր շատ դժուար է ստուգել ու վերահսկել, քանզի Հայաստանի մէջ շատ են այն մարդիկ, որոնք մի քանի կուսակցութիւն փոխած են անցնող տարիներու եւ տասնամեակներու ընթացքին, յատկապէս իշխանափոխութիւններէն ետք...

Այդպէս է որ, օրինակ, 1998-ին արդէն, 90-ականներուն ամենաբազմանդամ եւ ամենահզօր համարուող Հայոց Համագային Շարժումը (ՀՀՇ), խորհրդարանական ընտրութիւններուն հաւաքաբար շատ անլի նուազ ձայն հաւաքեց, քան՝ այժմ հանգուցեալ Վանօ Սիրադեղեանը անհատապէս:

Այդպէս է նաեւ, որ Աշոտ Նաւասարդեանի՝ համեմատաբար փոքրանդամ «Հանրապետական» կուսակցութիւնը հետագային, յատկապէս Սերժ Սարգսեանի նախագահութեան օրով, այնքան ուճացաւ, որ Երեւանի Մարզահամերգային համալիրի հսկայ դահլիճը ներկու գար կուսակցութեան համագումարներուն համար...

Հիմա ես չեմ գիտեր, թէ քանի՞ անդամ է մնացեր անլի քան վեց տասնեակ յայտարարուող այդ անդամակցութենէն եւ հիմա ո՞ր են եւ ո՞ր կազմակերպութեան անդամ: Անկասկած, նոյնը պիտի պատահի ներկայ իշխանակիր՝ «Քաղաքացիական պայմանագիր» տարօրինակ անունով կուսակցութեան: Միշտ ձեռնտու է իշխանական կուսակցութեան անդամ ըլլալը, յատկապէս ներկայ՝ ընդամենը 13 տոկոս վարկանիշ ունեցող Փաշինեանի իշխանութեան օրով՝ պաշտօն, աշխատանք, աշխատավարձ, դրամական պարգէներ եւ... իրաւունք: Նախ՝ ինչ կը նշանակէ քաղաքացիական պայմանագիր, որո՞ւ եւ որո՞նց միջեւ: Նիկոլ Փաշինեանի հետ պայմանագիր: Հապա ինչ պիտի ըլլայ Նիկոլի հեռանալէն ետք, պայմանագիրը պիտի գործէ, թէ պիտի խզուի կողմերէն մէկուն անհետացումէն ետք...

Ասոնք հարցեր են, որոնք թէ քաղաքական, թէ գաղափարական, թէ բարոյական ամենալուրջ խնդիրները կ'առաջացնեն մարդկային եւ ազգային հոգեբանութեան տեսակետէն՝ ի վերջոյ պետականութեան դիմադրողականութեան, նոյնիսկ գոյութեան խնդրին բախելով: Մէկ կազմակերպութենէ միւսը տեղափոխումը անհատական եւ ապա ազգային նկարագիր կը դառնայ իր անկանխատեսելի հետեւանքներով:

Առ ի չգոյէ գաղափարականութեան՝ հայրենի ժողովուրդին քաղաքական հետաքրքրութիւն ունեցող հատուածը հակած է դէպի իշխանութիւն եւ իշխանաւոր, որ, ինչպէս տեսանք, փոփոխական է, ինչպէս նախկին սովետական բոլոր երկիրներուն մէջ: Շուրջ 70 տարի սիրելով, ատելով, հանդուրժելով այդ իշխանութիւնը, մեր ժողովուրդը մէկ օրէն միւսը, հակառակ որ տեսեր էր այդ իշխանութեան բարիքներն ալ, երես թեքեց անոր գաղափարախօսութեան՝ սոցիալիզմին, նոյնիսկ ուրացաւ անոր հակակշռողական եւ վայրենի ազատականութիւնը (liberalism) զսպելու կարողութիւնը, որ այսօր կիրարկելի է նոյնիսկ Եւրոպական ամենամոլի դրամատիրական երկիրներուն մէջ: 70 եւ անլի տարիներ տիրապետող գաղափարախօսութիւնը մէկ օրէն միւսը, մեր աչքին առջեւ, դարձաւ անկարելի ու խորթ: Եւ այդ է պատճառը, որ այսօր Հայաստանը չունի սոցիալիստական-ընկերվարական կոչուող կամ թեքում ունեցող որեւէ գոնէ մէկ կազմակերպութիւն:

Ընդհակառակն, ինչպէս վերջերս դիտել կու տար



ռամկավար ընկերներէս մէկը, առկայ կուսակցութիւններուն մեծ մասը ռամկավար-ազատական (liberal democratic), առաւել եւս՝ առանց ռամկավարութեան ազատական գաղափարախօսութիւնը կ'ընդունին, կամ կը ձեւացնեն, թէ կ'ընդունին: Մտտան այդ կը պահանջէ:

Այս ամէնը կը ներկայացուին մանաւանդ այսօր, երբ, ի մօտոյ, Սեպտեմբերի 17-ին, տեղի պիտի ունենան Երեւանի համայնքային քաղաքապետական ընտրութիւնները: Տասը կուսակցութիւն եւ կուսակցութիւններու մէկ դաշինք Օգոստոս 23-էն ի վեր լծուած են քարոզարշաւի՝ ոմանք յաղթելու, միւսները ինքնահաստատուելու կամ գլխաւոր յաւակնորդներէն ձայն գողնալու նպատակով:

Խայտաբղէտ անուններով, ուր «Հայաստան» անունը ամենաշատ կրկնուողն է, այդ կազմակերպութիւններէն որեւէ մէկը չունի յստակ կամ յստակին մօտ որեւէ գաղափարախօսութիւն: Փոխարէնը՝ երկու առաջատարները՝ «Քաղաքացիական պայմանագիր»ը, փոխքաղաքապետ Տիգրան Աւինեանի գլխաւորութեամբ, եւ «Մայր Հայաստան» դաշինքը՝ Անդրանիկ Թեւանեանի առաջնորդութեամբ, ունին շատ գործնական առաջադրանքներ: Առաջինը՝ ամէն գնով պահելու իշխանական իր դիրքերը, եւ ցմրոր վայել գայն, երկրորդը՝ ամէն գնով տապալելու այդ իշխանութիւնը, տուեալ վերցնելով այն ճշմարտութիւնը, թէ մայրաքաղաքին տիրապետողը կը տիրապետէ ամբողջ Հայաստանին: Այլ խօսքով՝ պայքար Նիկոլ Փաշինեանի միահեծան իշխանութեան համար եւ ընդդէմ անոր: Մինչդէռ քաղաքամայր Երեւանը այնքան հին եւ այնքան նոր խնդիրներ ունի, որոնց յաղթահարումը, գէթ մասամբ, կը պահանջէ քաղաքաշինական արդիական մասնագիտական մեծ հմտութիւններ, կամք, տեսիլք, գաղափարախօսութիւն, որոնց մասին ոչ ոք կը խօսի. նկատի ունիմ ընտրական ճակատամարտին մասնակցողները:

Այս պայմաններուն տակ հարցը կ'առաջանայ ըստինքեան՝ իսկ ինչ կ'ընեն մեր ամանակական՝ իբր գաղափարակիր 136, 128 եւ 102 տարուան պատմութիւն եւ փորձ ունեցող կուսակցութիւնները: Անոնցմէ միայն մէկը, 136 տարուան պատմութիւն ունեցող Հնչակեան կուսակցութիւնն է, որ ինչ-որ ձեւով, ամէն պարագայի՝ խիստ արտառոց որոշումով մը, իր հակառուսականութեամբ յայտնի Տիգրան Խզմալեանի «Եւրոպական» կոչուող հնգամեայ կուսակցութեան հետ դաշն կնքած, պիտի մասնակցի ընտրապայքարին: Իսկ Դաշնակցութիւնը, որուն վարկանիշը, ըստ հայաստանեան Gellup-ի վերջին հարցախոյզին՝ 0,4 տոկոս է, ընտրութիւններուն հաւանաբար մասնակցի լռելեայն միաձուլուած «Մայր Հայաստան» դաշինքին:

Իսկ ինչ կը վերաբերի Ռամկավար Ազատական կուսակցութեան, որ արդէն տեսական ժամանակէ ի վեր կը տառապի սնամեջ փառասիրութեամբ յայտնի գոյգ անձերու, մէկը Թորոնթոյնէն, միւսը Լոս Անճելըսէն, խարդաւանքներէն ու պառակտիչ գործողութիւններէն, ընդհանրապէս գոյութիւն չունի ո՛չ ընտրապայքարի, ո՛չ ալ որեւէ այլ բանի մէջ, չունի տեսակետ, կարծիք, առաւել եւս՝ գործունէութիւն հայ ժողովուրդի ու Հայոց պետականութեան, նոյնիսկ արցախահայութեան տառապալից ներկայ կացութեան վերաբերեալ:

Գաղափարազրկութիւնը անսկզբունքայնութիւն, իսկ անսկզբունքայնութիւնը անգործութիւն կը նշանակէ: Մինչդէռ մարտահրաւերները շատ են եւ վտանգաւոր:

Երեւան
«ՊԱՅՔԱՐ» շաբաթաթերթ

ԱՏՐՊԷՅՃԱՆ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԷՆ ԱՌԵՒԱՆԿԱԾ Է ԱՐՅԱԽՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԸ

Ատրպէյճանական կողմը Լազինի միջանցքին մէջ գտնուող ապօրինի անցակետէն առեւանգած է ռուս խաղաղապահներուն ուղեկցութեամբ Արցախէն Հայաստան մեկնող Ալէն Նելսոնի Սարգսեանը ծնեալ 2001-ի: Այս մասին յայտնած է Արցախի տեղեկատւական շտապը:

Առեւանգումի պատճառներուն մասին տակաւին որեւէ հաւաստի տեղեկութիւն չկայ:

Ալէն Սարգսեան ռուսնող է, ան մեկնած էր Երեւան՝ իր ուսումը շարունակելու նպատակով:

«Ատրպէյճան կը շարունակէ Արցախի ժողովուրդին հանդէպ ցեղասպանական քաղաքականութիւնը՝ հերթականօրէն խախտելով միջազգային մարդասիրական իրաւունքի չափանիշերը: Դէպքին մասին մանրամասնութիւններ պիտի հաղորդուին հետագայ ժամերուն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ԱԳԱԳԷՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԵՏԻՍ ԳՎԳՎԱՆԵՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍՈՑ Բ. ՄԱՍՈՒՐԵՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԹՈՅԼ ՉԻ ՏԱՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԸ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՆ ԱՐՑԱԽ



Փարիզի եւ ֆրանսական շարք մը մեծ քաղաքներու իշխանութիւններուն ուղարկած մարդասիրական բեռը արդէն Կոռնիձորի մէջ է:

Չորեքշաբթի՝ 30 Օգոստոս 2023-ին, 10 բեռնատարները առաւօտեան շարժած էին դէպի Կոռնիձոր Երեւանի շանրապետութեան հրապարակէն:

Շարասինին կ'ուղեկցէր Փարիզի քաղաքապետ Անն Իտալյօն:

Նախքան Կոռնիձոր հասնիլը Փարիզի քաղաքապետին Գորիսի մէջ դիմաւորած են Սինիքի մարզպետ Ռոպերթ Ղուկասեանը, Արցախի արտաքին գործերու նախարար Սերկէյ Ղազարեանը եւ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանեանը:

Անն Իտալյօն աւելի վաղ թուրքերէն իր եղով ֆրանսական պատվիրակութեան հետ շայաստանէն լուսանկար հրապարակած էր՝ ուղեկցելով հետեւեալ գրառմամբ «շայաստանի մէջ ենք՝ Փարիզի եւ այլ տեղական իշխանութիւններու ընտրուած պաշտօնեաներու հետ: Ինչ ամիս է՝ Արցախի 120 հազար հայերը, որոնցմէ 30 հազարը՝ երեխաներ, մեկուսացուած են, մատնուած են սովի, զրկուած են ամէն ինչէ: Մարդասիրական այդ աղետին դէմ-յանդիման մենք անոնց համար հրատապ օգնութիւն կը տանինք: Ժամանակը հաշուած է»:

Ֆրանսական օգնութեամբ առաջին բեռնատարները Կոռնիձորի մէջ են Օգոստոս 9-էն, ուր Յուլիս 26-էն կը սպասէ նաեւ շայաստանէն Լեռնային Ղարաբաղ ուղարկուող մօտ 400 թոն մարդասիրական օգնութիւնը Ատրպէյճանը թոյլ չի տար Լաչինի միջանցքով բեռներու մուտքը Լեռնային Ղարաբաղ:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՓԱԿ ՊԱՅԵԼ ԱԿՆԱ-ՍՏԵՓԱՆԱԿԵՐՑ ԾԱՆԱՊԱՐՅՈՒ




Պաքուի բեռնատարներուն մուտքը Արցախի տարածք թոյլ չտալու շարժումը կը շարունակուի: Առաւօտէն վրան տեղադրուած է, աքթիսթերը կը շարունակեն փակ պահել Ակնա-Ասկերան-Ստեփանակերտ ճանապարհը: Step1.am-ին ասկերանցի Ա. Արզումանեանը ըսաւ, որ հազարէն աւելի արցախցիներ փակած են Ակնա-Ասկերան ճանապարհը. «Մենք դէմ ենք այս ալիւրի ներկրմանը Արցախ: Բոլորը հասկանում են, որ սա ոչ թէ մարդասիրական բեռ է, այլ՝ սադրանք: Եթէ մենք համաձայնուենք ընդունել այս բեռը, մենք խաչ կը քաշենք մեր ապագայի վրայ»:

Շարժումի մասնակից Ա. Գրիգորեանը նշեց, որ պիտի պարզուի երկու հարց՝ պատրաստ են չոս խաղաղապահները կատարելու իրենց պարտականութիւնները Նոյեմբեր 9-ի եռակողմ փաստաթուղթին համաձայն, եւ Արցախի իշխանութիւնները պատրաստ են պայքարելու յանուն հանրապետութեան եւ ժողովուրդին:

Արցախի իշխանութիւնները դեռ պաշտօնապէս չեն արձագանգած սադրանքին: Նախագահին մամուլի քարտուղարը վերջերս միայն յայտարարեց, որ շարժումը համաձայնեցուած չէ Արցախի ղեկավարութեան հետ, եւ կը ընկարկուի միայն Լաչինի միջանցքի բացման հարցը: Սակայն յայտարարութիւններ չեն եղած, որ պետական անվտանգութեան մարմինները թոյլ չեն տար Պաքուի շարասինին անցումը:

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՅԿԱԿԱՆ ROCK N' ROLL-Ի ԲԱՅԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ



Երիտասարդներուն տրուած է նորութիւններ ստեղծել, բայց պէտք է ունենալ հաւատք եւ վըստահութիւն անոնց կարողութիւններու վրայ... եւ տալ թիւեր ու թռչին:

Եւ այդպէ՛ս ալ պատահեցաւ 26 Օգոստոսի Շաբաթ երեկոյեան, երբ խոռոչերամ երիտասարդութիւն մը, հաւաքուած էր Թեքեան Մշակութային Միութեան կեդրոնին մէջ վայելելու ROCK N' ROLL-ի խանդավառ երեկոյթը:

Գունատր շողշողուն լոյսեր, բարելաւուած նոր



ձայնային համակարգ (oparleur), անհանդարտ պարահարթակ, նախ՝ DJ Anto, լետոյ նուագախումբը, (Live band) առաջնորդութեամբ՝ Ժանօ Ալեք Արապաթեանի, իր կիթառի ընկերակցութեամբ:

...Այս բոլորը կազմակերպուած էր երիտասարդներու կողմէ՝ երիտասարդներուն համար:

Բացառիկ երգացանկով մը ի յայտ կու գար նուագախումբը յանձինքն՝

Loarence (երգչուհին), Hagop Arabatlian (drums), Phillip (Keyboard), Raziel (bass guitar), Viken Apkarian (Sound management), Di Gary (Sound engineer), Sam Cholakian (Papa Haig production - audio & video effects):



Ուրիշ առիթներով ներկայ եղած ենք Քլօէ Պալեանի բազմաթիւ ձիրքերուն, սակայն Քլօէն այդ գիշեր գերազանցեց ինքզինքը: Ամբողջ երեք ժամայ տեւողութեան, անսպառ ու անհատնում կորովի ու աշխուժութեան հաւաքածոյ մը եղաւ: Իր գեղեցիկ ձայնով ու պարերով խանդավառեց ու էլեքտրականացուց ներկայ երիտասարդութիւնը. բոլորը, որոնք երբեմն միաբերան կը ձայնակցէին երգերուն:



Անմոռանալի երեկոյ մըն էր...: Մանաւանդ երբ յանկարծ պատահեցաւ անմոռանալին...:

...Երեկոյթը կազմուած էր անգլիական, ֆրանսական կամ բազմաքաղաքային (Cosmopolitan) երգացանկով...: Սակայն բոլորս անակնկալի եկանք երբ երեկոյթի առաջին եւ միակ շայկական երգը մեզի հրամցուց երիտասարդ Anto-ն, անուշ ու զգայացունց տուտուկի ձայնով՝ «Տէլէ Եաման» երգը, կիթառի ընկերակցութեամբ Ժան Ալեք Արապաթեանի:

Պահ մը սառն լռութիւն տիրեց: շայկական ոգին, սիրտը, տուտուկն էր որ կ'երգէր, եւ մենք յուզումով այլ հպարտութեամբ կ'ունկնդրէինք «Տէլէ Եաման»:

Որոտընդոստ ծափահարութիւններ:

Պռաւօ՝ Թեքեան Մշակութային Միութեան Վարչութեան, որ իր ուրախութեամբ ու խանդավառութեամբ չէր գինովցած, այլ միշտ գիտակից էր իր շայկականութեամբը:

Ահա այսպէս կ'ըլլայ կատարեալ շայկական ROCK N' ROLL երեկոյ մը:

ԼՈՅՍ, ՈՐ ԴԱՐՁԱՒ ՀՆՉԻԻՆ ԱՐԱՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 120-ԱՄԵԱԿ (1903-2023)

ԳՐԵՑ՝ ՍԵՂՈ ՎԱՆՏԱՐԱՐԵԱՆ

Երաժշտությունն իմ աշխարհն է, որի մեջ ձգտում եմ պատմել ամեն ինչի մասին, ինչ մտածում եմ ու երագում:

Ցանկանում եմ որ իմ թեմաները ծնեն վառ պատկերներ, մտքեր, որպեսզի դրանք հնարաւոր լինի երգել, նոյնիսկ սուլել...
Ա. Խաչատուրեան

Մեծություններու ծնունդը, անտարակոյս, պայմանաւորուած է ժամանակի, դարաշրջանի պահանջներով:

Հիմնուած էր հայ ազգային երաժշտական դպրոցը, Կոմիտասը ստեղծած էր հայոց երաժշտական լեզուն, հաստատած էր անոր ինքնութիւնը: Ստեղծուած էր ազգային օփերան, դրուած էին սիմֆոնիզմի ամուր հիմքերը: Կային արդէն Ա. Տիգրանեանի «Անուշն» ու Ալեքսանդր Սպենդիարեանի «Ալմաստը», ինչպէս նաեւ «Երեւանեան Էտիւտներ»:

Պէտք էր ծնէր մեր ժամանակներու արուեստագետը, որը շարունակէր ու նոր աստիճանի հասցնէր Կոմիտասի Սպենդիարեանի, Տիգրանեանի սկզբած գործը:

20-րդ դարի երաժշտական աշխարհը յագեցած էր Խաչատուրեանական լուսարար հնչիւններով:

Ասպարէզ եկաւ Արամ Խաչատուրեանը:

Ան ծնած է 1903թ. Մայիս 24 Կովկասի աշուղներու եւ սազանդարներու մշակութային թիֆլիս քաղաքին մէջ (Վրաստան):



Անցած գարնանը ան 120 տարեկան կը դառնար, եւ կը թուայ թէ, ուր որ է ան դուրս կու գայ իր աշխատասենեակէն ու ընդառաջ գալով՝ կը ժպտայ իր գարնանալի խոշոր աչքերով եւ ընդհանրապէս իր ողջ արտայայտիչ, մեծաքանակ բարի դէմքով... ուր բարութիւն, հոգու պարզութիւն, խորաթափանց մարդկայնութիւն... հնարաւոր է, որ այս է որ զօրաւոր կը հնչէ անոր ստեղծագործութիւններուն մէջ, որոնք դասական դարձան դեռեւս ստեղծագործողի կենդանութեան ժամանակ:

Անոր կոչումը երաժշտութիւնն էր: Եւ երաժշտութեան ալ տրուեցաւ անմոռաց, առանց իրեն խնայելու:

«Արամ Խաչատուրեանը խորապէս զգաց եւ ըմբռնեց հայ ժողովուրդի երգի ոգին ու անով ալ ոգեւորեց իր թարմ ու գեղեցիկ երաժշտութիւնը - ըսած է Ալեքսի Իսահակեան:

Ան հայ երգը իր գեղարուեստական մեծ տաղանդի պրիզմա անցուց եւ ներկայացուց աշխարհին»:

«Խաչատուրեանի արուեստը նոր ներդրում էր ազգային մշակոյթի համար, գրած է Մարտիրոս Սարգեան: Այդ ներդրումը բացաւ բազում ուղիներ արուեստի խորհրդաւոր, հրապուրիչ ուղիներ: Մայր ուղիով ընթացողը մնաց ինքը՝ Խաչատուրեանը»:


«Ես մեծացել եմ երաժշտական հարուստ, իւրօրինակ միջավայրի մէջ. կը պատմէր Ա. Խաչատուրեանը...- ինչքան էլ հետագայում փոխուեց ու կատարելագործուեց իմ երաժշտական ճաշակը, նախնական ազգային հիմքը, որ ես ժառանգել էի մանկական տարիներից ժողովուրդի հետ ունե-

ցած կենդանի շփումով, մնաց իմ արուեստի բնական ակունքը»:

Ապագայ երաժիշտի կեանքի կերտմանը մեծ եղած է մանկութեան տարիներուն մօր՝ Նինա Մակարովայի երգած հայկական ժողովրդական երգերու ազդեցութիւնը: Հայրը նոյնպէս ստեղծագործող էր: Ծնողները ունէին կախարդական այն ուժը, որը կը կոչուի հոգեկան հարստութիւն: Մարդկայնութիւն...:

Եւ մեծագոյն երջանկութիւն է, որ այդ հարստութիւնը շոյայտէ մարմնաւորուած էր, խորապէս արտայայտուած Ա. Խաչատուրեանի երաժշտութեան մէջ:

Աշխարհահռչակ կոմպոզիտորը շատ մեծերու



նման մանկուց չ'սկսաւ ստեղծագործել, եւ կամ առհասարակ զբաղիլ երաժշտութեամբ: Այդ շրջանին ան միայն ունկնդիր էր: Մանկութեան տարիներուն ստացած առաջին երաժշտական տպաւորութիւնները մօրմէ լսած հայկական ժողովրդական երգերն էին անոր հոգու մէջ:

«-Յիշում եմ,- կը պատմէ Արամը,- պղնձեայ մեծ տաշտակն առած, բարձրանում էի մեր տանիքը եւ մեծ ջանասիրութեամբ աշխատում հնչեցնել լըսածս ռիթմերը: Իմ այդ երաժշտական սկզբնական գործունեութիւնը գերագոյն հաճոյք էր պատճառում ինձ, իսկ ծնողներին յուսահատեցնում»:

1921 թուականի աշնանը Մոսկուայէն թիֆլիս կը ժամանէ Արամ Խաչատուրեանի աւագ եղբայր՝ Սուրէն Խաչատուրեանը:

Ան եկած էր Մոսկուայի դրամատիքական սթուտիոյի համար դերասանական կադրեր ընտրելու: Վերադարձին իր հետ Մոսկուա կը տանի նաեւ կրտսեր եղբորը՝ Արամին:

Մոսկուան դարձաւ ապագայ մեծանուն կոմպոզիտորի ուսումնառութեան քաղաքը:

Այնտեղ, տասնութամեայ Խաչատուրեանը 1922-ին կ'ընդունուի Մոսկուայի Կնեսինի անուան երաժշտական ուսումնարանը մասնագիտանալու թաւջութեան գործիքին: Հոն դասընկերները կ'ըլլան 12-13 տարեկան երեխաներ: Իսկ Արամը միայն 19 տարեկան հասակին սկսաւ լրջօրէն զբաղուիլ երաժշտութեամբ հետեւելով ռուսական դասական դպրոցի իր ուսուցիչներուն եւ յատկապէս Սովետական երաժշտութեան հիմնադիրներէն մէկու՝ Նիկոլայ Մետսկովսկիի յառաջադիմական սկզբունքներուն: Նկատելով Խաչատուրեանի ստեղծագործական տուեալները, երկու տարի անց զինք կը տեղափոխեն ստեղծագործական դասարան:

1929-ին կ'աւարտէ ուսումնարանը եւ նոյն տարւայ աշնանը կ'ընդունուի Մոսկուայի Չայքովսկիի անուան պետական երաժշտանոցը ուր կուսումնասիրէ երաժշտական արուեստի լաւագոյն էջերը, եւ առաջին իսկ օրերուն իր ուսուցիչներուն ուշադրութիւնը կը գրաւէ:

1934 թուականին գերագանց կ'աւարտէ ուսման շրջանը դիպլոմային աշխատանք ներկայացնելով «Առաջին Սիմֆոնիան» որի մասին կարելի է ըսել, որ այն կեանքի ու գեղեցկութեան, ուրախութիւններու, զմայլանքի արտայայտութիւնն է:



20-րդ դարի մեծագոյն կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչը ըսած է. «Ինձ ապշեցրեց այդ ստեղծագործութեան մեղեդային արտասովոր հարստութիւնը, սքանչելի վառ գործիքաւորումը, երաժշտական նիւթի խոր բովանդակութիւնը, ընդհանուր եւ ուրախ կողորհտը»:

Արամ Խաչատուրեանի անունը, Չայքովսկիի, Ռախմանինովի, Շոստակովիչի եւ այլ ռուս մեծագոյն երգահաններու կողքին ոսկէ տառերով կ'արձանագրուի Մոսկուայի երաժշտանոցի մարմարեայ պատուոյ քարին վրայ:

Այս ամէնի հազուագիւտ երջանիկ զուգահիշամամբ ան մուտք գործեց երաժշտական ասպարէզ: Եկաւ շունդալից մնայուն գործերով: Դեռեւս մէկ ըստեղծագործական հրաշալիքներով չ'յագեցած, ան ունկնդրին իրար յաջորդելով կը հրամցնէր իր յաջորդ գործերը. «դաշնամուրային կոնցերտ կամ սիմֆոնիք պոէմ», «Ջութակի կոնցերտ» կամ «Գայանէ» պալէ, «Թաւջութեան կոնցերտ» կամ «Սպարտակ»:

Ինձ կը թուայ, որ Ա. Խաչատուրեանի երաժշտութեան հիանալի յատկութիւններէն մէկը ընդհանրապէս եւ «Սպարտակ» պալէինը մասնաւորապէս անոր ժողովրդայնութիւնն ու ազգային յատկանիշը ոչ միայն անոր սքանչելի սիմֆոնիաներու, գործիքային կոնցերտներու, այլեւ միւս ստեղծագործութիւններու մէջ է, որքան ալ անոնք սիւժեյով տարբեր են:

1942թ. Դեկտեմբեր 3-ին Պերմ քաղաքին մէջ կը ներկայացուի «Գայանէ» պալէի առաջին ներկայացումը: Պարուսոյցը (choreographer) երբ արդէն «Գայանէ»ն պատրաստ էր ներկայացնելու մի քանի օր առաջ հեղինակին կ'առաջարկէ երաժշտութեամբ աւելցնել եւս մէկ պար մը տղամարդկանց համար: Հեղինակը չի համաձայնիր, սակայն տեղի տալով մէկ գիշերուայ մէջ կը յօրինէ Սուրերու պարը: «Գայանէ»ն կը ներկայացնէ սիրոյ գեղեցկութեան ու ողբերգութեան տեսարան մը:

Հէշտ չէր, արուեստագետի խնդիրը. պէտք էր առաջնորդուիլ ազգային աւանդներով, պէտք էր նորը ներմուծել ազգային կոչուէր «Խաչատուրեանականը հայ երաժշտութեան մէջ»:

Պիտի անցնէին տարիներ:

Պատահական չէր, որ Նիւ Եորքի մէջ Ա. Խաչատուրեանի «Ջութակի կոնցերտի» կատարումն յետոյ գրախօսականը գրեց. «Ահա մի նոր թարմ բան, մի կոնցերտ, որ օժտուած է լայն ընդգրկումով, թափով, հրավառ աւիւնով: Եթէ լոյսը մաքուր լոյսը, իր ամբողջ փայլով, հնարաւոր լինէր հալել, դարձնել ինչիւն, ապա հենց այդ էլ արել է Ա. Խաչատուրեանը իր գլուխգործոցում»:

Իր ողջ կերպարանքով լինելով իսկական հայրորդի, ան ամենայն խորութեամբ զգաց ամբողջական մի Արեւելք ու իր շատ անհատական ներքինով կերտեց իւրատիպ մի Արեւելք ինչ խօսք որ այդ Արեւելքի ամենաձիգ հիմքերը եկած են մայր հողէն՝ հայկականէն, անոր անցեալի աւանդներէն:

Խաչատուրեանի ներքին մղումները, ընկալում-
Շար. - էջ 9

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 4 SEPTEMBRE 2023

L'expansion des BRICS et ses implications

Écrit en anglais par Benjamin Poghosian et publié dans *The Armenian Spectator* en date du 25 août 2023

Lorsque l'économiste Jim O'Neill, qui travaillait alors chez Goldman Sachs Group Inc., a inventé le terme BRIC (Brésil, Russie, Inde, Chine) en 2001 pour attirer l'attention sur les taux de croissance solides au Brésil, en Russie, en Inde et en Chine, peu de gens auraient pu imaginer que 22 ans plus tard, ce terme serait le mot à la mode qui façonnerait la géopolitique mondiale. En 2010, les BRIC sont devenus les BRICS lorsque l'Afrique du Sud s'est jointe au club, mais beaucoup étaient encore sceptiques quant à la possibilité qu'un groupement de divers pays puisse jouer un rôle significatif dans la politique mondiale. Cependant, alors que la Chine se transformait en un poids lourd de l'économie mondiale, les États-Unis l'ont déclaré leur concurrent stratégique, et les relations entre la Russie et l'Occident ont atteint leur point le plus bas depuis la fin de la guerre froide en raison de la guerre entre la Russie et l'Ukraine, des universitaires, des politiciens et des experts ont commencé à discuter activement de l'émergence d'un nouvel ordre mondial multipolaire, considérant les BRICS comme l'un de ses principaux piliers.

Néanmoins, des doutes subsistent



quant à la capacité des BRICS à mettre en œuvre une politique cohérente et consistante. Beaucoup ont souligné les tensions croissantes entre la Chine et l'Inde et le partenariat stratégique naissant entre l'Inde et les États-Unis comme l'un des obstacles à la transformation des BRICS en quelque chose de plus qu'un club d'économies en développement ayant des objectifs différents. La sagesse conventionnelle voulait que l'Inde, le Brésil et l'Afrique du Sud n'accepteraient pas de faire des BRICS un concurrent du G7, surtout dans un contexte de tensions croissantes entre l'Occident, la Russie et la Chine. Pendant ce temps, les BRICS devenaient de plus en plus populaires parmi les pays en développement. À la veille de leur 15e sommet, le premier organisé en personne depuis la pandémie de COVID-19, 22 pays ont officiellement demandé à se joindre aux BRICS.

Le principal moteur de ce processus a probablement été le ressentiment croissant dans les pays du Sud à l'égard de la politique des pays développés. Le ministre indien des Affaires étrangères, Subrahmanyam Jaishankar, a exprimé ce ressentiment de la meilleure façon lors de son discours lors de la 17e édition du Fo-



rum de Bratislava en juin 2022, affirmant que l'Europe devait sortir de la mentalité selon laquelle les problèmes de l'Europe étaient les problèmes du monde, mais que les problèmes du monde n'étaient pas les problèmes de l'Europe. M. Jaishankar a mentionné l'Europe, mais beaucoup dans les pays du Sud utiliseraient le terme « Occident collectif » dans la même phrase. Elle répondait directement à la politique occidentale au début de la guerre en Ukraine, exigeant que chacun suive les sanctions contre la Russie, quelles que soient les implications pour leur économie.

Un autre moteur de l'attractivité croissante des BRICS a été la politique américaine consistant à utiliser le dollar américain, la monnaie de réserve mondiale, comme outil de coercition et de punition économiques. Les sanctions économiques imposées à la Russie, le gel ou la confiscation des avoirs russes à l'étranger et le recours intensif à des sanctions secondaires étaient des signes avant-coureurs pour beaucoup en dehors de l'Occident collectif qu'une trop grande dépendance à l'égard du dollar les rend vulnérables à la pression politique de Washington. Il n'est pas surprenant que de nombreux pays en développement aient fait leurs premiers pas vers l'utilisation des monnaies nationales dans le commerce bilatéral. La Russie et la Chine sont les précurseurs dans ce domaine, mais pas seulement. À la mi-août 2023, l'Inde et les Émirats arabes unis ont commencé à régler leurs échanges bilatéraux dans leurs monnaies locales, le principal raffineur indien effectuant des paiements en roupies pour un million de barils de pétrole en provenance de ce pays du Moyen-Orient. Cette transaction fait suite à une transaction impliquant la vente de 25 kg d'or d'un exportateur d'or des Émirats arabes unis à un acheteur en Inde pour environ 128,4 millions de roupies (1,54 million de dollars).

Avant le début du sommet des BRICS en Afrique du Sud, le principal sujet d'intérêt était la participation éventuelle du président russe Vladimir Poutine. Cette décision a été déclenchée par un mandat d'arrêt émis contre lui par la Cour pénale internationale (CPI) pour des crimes de guerre présumés en Ukraine.

En tant que signataire du Statut de

Suite à la page 6

Le Canada réprimandé par l'Azerbaïdjan pour ses propos sur l'Artsakh

Le ministère azerbaïdjanais des Affaires étrangères a affirmé que la ministre canadienne des Affaires étrangères, Mélanie Joly, a porté atteinte à la paix dans la région du Haut-Karabagh.

Le 19 août dernier, lors d'un discours au Centre communautaire arménien de Montréal, Mélanie Joly a déclaré envisager aborder la situation du Haut-Karabagh lors des prochains sommets organisés par le G20, le G7 et les Nations unies.

« La région, et en particulier les Arméniens, sont confrontés à une réelle menace en Artsakh », a déclaré Mélanie Joly. « Nous devons aborder cette question de l'Artsakh à chaque table diplomatique à laquelle nous avons accès ».

Dans un communiqué publié le 23 août, le ministère des Affaires étrangères d'Azerbaïdjan a affirmé que Mme Joly faisait des « déclarations unilatérales », notant que « de telles déclarations (du) Canada ne font rien pour servir la paix et la stabilité dans la région et sont inacceptables ».

Plus tôt ce mois-ci, le sénateur conservateur Leo Housakos a fait référence à la République d'Artsakh dans une lettre ouverte félicitant un homme politique pour son élection à la présidence de l'Assemblée nationale de la région séparatiste.

Le Canada prévoit envoyer deux responsables pour soutenir une mission de surveillance européenne visant à empêcher une autre guerre dans la région.



Des membres du Congrès US exigent l'ouverture du corridor de Latchine et demandent la fin de l'aide américaine à l'Azerbaïdjan



Des représentants des autorités fédérales, étatiques et municipales des États-Unis se sont joints au Conseil panarménien d'Amérique occidentale pour exiger l'ouverture immédiate du corridor de Latchine. Les congressistes Adam Schiff et Brad Sherman ont appelé l'administration présidentielle à priver l'Azerbaïdjan de l'aide américaine annuelle et à appliquer des sanctions en cas de violation des droits de l'homme. « Je suis aux côtés des 120 000 habitants de l'Artsakh et de la diaspora arménienne qui les défend. Le blocus illégal du corridor de Latchine par l'Azerbaïdjan doit cesser. Les États-Unis ont reconnu le génocide arménien et ont dit de ne plus jamais le faire. Nous devons faire plus que nous engager. Nous devons agir », a déclaré Adam Schiff.

« Nous assistons à une catastrophe humanitaire en Artsakh. Nous devons demander des comptes au régime Aliiev et mettre fin à l'assistance militaire américaine à l'Azerbaïdjan », a déclaré à son tour le représentant Sherman.

Envoi d'un convoi humanitaire français au Haut-Karabagh

À la demande du Conseil de coordination des organisations franco-arméniennes (CCAF), la maire de Paris, Anne Hidalgo, a lancé une initiative appelant les communautés régionales de France à organiser un convoi humanitaire vers le Haut-Karabagh assiégré depuis le 12 décembre 2022.

Le programme est financé par les régions Ile-de-France, Auvergne-Rhône-Alpes, Hauts-de-France, Occitanie, Pays de la Loire et Provence-Alpes-Côte d'Azur et de nombreuses villes du pays.

Anne Hidalgo, Xavier Bertrand, Bruno Retailleau, Jeanne Barseghian, ainsi que Patrick Karam et Michele Rubirola ont décidé d'accompagner physiquement ce convoi qui devrait atteindre le couloir de Latchine dans l'après-midi du 30 août.

